

կալահե, կհայտնե և այլն.—որոշ բնորոշումներ բազմիցս կրկնելը, նույնիսկ յուրօրինակ կետադրությունը, որոնք հասուկ են Չարենցի գրելաձևին): Սակայն այսքանն էլ բավական է Չարենցի՝ տվյալ հոգվածի հեղինակ լինելը ապացուցելու համար: Սրանք զուգադիպություններ են, որ սովորաբար երևան են գալիս, երբ հեղինակը նորից ու նորից վերագտնում է միևնույն հարցին կամ նույն անձնավորության բնութագրմանը:

Կարծում ենք, հրապարակվող նյութը պետք է մտցվի Չարենցի հոգվածների մեջ և լրացնի Թումանյանի մասին նրա բազմաթիվ արձակ ու չափածո էությունների շարքը, որոնք, միասին վերցրած, տալիս են մեր ազգային մեծագույն բանաստեղծի ամենավաղ և խոր գնահատականներից մեկը:

Է. ԶԲԱՆՅԱՆ

ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ՓԱՍՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

1949 թ. Միքայել Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի երկրորդ հատորում գետեղվել է «Հյուսիսափայլի» 1860 թ. № 11 տետրակից հանված մի նամակ Սարգիս Տեր-Միքայելյան Վարչամյանց ստորագրությամբ: Այդ առթիվ հատորի ծանոթագրությունների մեջ ասված է. «Նալբանդյանագետների ուշադրությունից վրիպել է այս նամակի հեղինակի ով լինելու հարցը: Բավական է նորից նայել ստորագրությանը և քաղաքին, որտեղից ուղարկված է նամակը, համոզվելու համար, որ ստորագրությունը մտացածին է»: Ծանոթագրողի կարծիքով այդ ստորագրության տակ թաքնված է «Հյուսիսափայլի» փորձված աշխատակիցներից մեկը, անկասկած Միքայել Նալբանդյանը, քանի որ «նամակի ընդհանուր շունչը, լեզուն, ոճը, տեղ-տեղ պոլեմիկական ինքնատույ, համարձակ դատողությունները, խոսում են միայն Նալբանդյանի օգտին»¹: Այս եզրակացությունը տարիներ շարունակ ծառայել է իբրև Նալբանդյանի և Նաղարյանի լեզվաբանական սկզբունքների ստորսրությունները բացահայտող փաստարկ:

Տվյալների հանդամանալի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզելու, թե իրականում ո՞վ է եղել Սարգիս Տեր-Միքայելյան Վարչամյանցը, ի՞նչ առիթով է գրվել այդ նամակը և կարո՞ղ էր այն Մ. Նալբանդյանի գրչի արգասիքը լինել:

Սարգիս Տեր-Միքայելյան Վարչամյանցը 1860—1880-ական թթ. եղել է Իսթվի աչքի ընկնող հասարակական գործիչներից մեկը: 1855 թվականից ապրում էր Բաքվում: 1864 թ. մասնակցում է Բոլշկ Դավիթ Խոստումյանի ջանքերով կազմակերպված «Մարդասիրական ընկերության» հիմնադրմանը: 1868 թ. սկսած երկար տարիներ վարել է ընկերության ատենադպրի պաշտոնը: Մեզ հայտնի են նրա հոգվածները «Մշակում» (1870—1880-ական թթ.) և բացի դրանցից 1885 թ. տպագրած գիրքը՝ «Ներսես արքեպիսկոպոսի կաթողիկոսական ընտրությունը և այդ ընտրությանը մասնակցող պատգամավորի պաշտոնը» վերնագրով:

Ինչպես տեսնում ենք, Սարգիս Տեր-Միքայելյան Վարչամյանց ազգանունը մտացածին չէ: Այժմ պետք է քննել այն հանգամանքները, որոնք ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն տվյալ խնդրի պարզաբանման գործում:

¹ Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 434:

1860 թ. հուլիսին Բարվում ստացվում է նախորդ տարվա վերջին ընդհատված «Ճոռաքաղի» «Հայտարարությունը»՝ թերթի վերահրատարակության մասին: Հայտարարության ազդեցությամբ աշխարհաբար զժգոհություն է առաջանում գրական նոր լեզվի կողմնակիցների շրջանում: Մարդիս Տեր-Միքայելյան վարչամյանցը, կոմս էմանուելի անունով նամակ է գրում «Հյուսիսսփայլին»: Այստեղ նշվում են ճազգին տված նրա օգուտները, որոնցից մեկը վարչամյանցը համարում է «կենդանի լեզվի մշակագործությունը»: Բայց նամակագրի սուպերակր չի էղել, սոսկ գեղասանքի խոսքեր ուղղել ամսագրին: Նրա կարծիքով «Հյուսիսսփայլը» չպետք է բավարարվի միայն լեզվի մշակման հարցերով, այլ հատուկ ուշադրության պիտի առնի մյուս թերթերի լեզուն, օգնի նրանց իբրև «կրտսեր եղբայրների» և խրախուսելու նպատակով ներկայացնի ոչ միայն թերությունները, այլև արժանիքները:

Սակայն նամակագիրը զժգոհ է «Հյուսիսսփայլից»: Նրա կարծիքով ամսագիրը, զանց առնելով իր կարևոր գերը, բավարարվում է մանր քննություններ կատարելով: Նկատի ունենալով նման օրինակներից մեկը, նա գրում է, թե «Հյուսիսսփայլը» «հաճելով կամ տհաճելով Սկայորդու արացի զարկելույ», իջանում է խոսել նորա տղայական նամակների վերա, զանց առնելով միանգամայն բերան բանալ և մի երկու բառ ասել «Ճոռաքաղի» մասին, որ մեր աշխարհաբար լեզուն շինել է տիրացուի շիւղիւղով, կամ ուսաց (պասվա) վիճակում»²:

Ի՞նչ է ակնարկում վարչամյանցը և ո՞ւմ է քննադատում: Զարմայր Մսերյանը 1860 թ. «Մեղու Հայաստանի» թերթին նամակաձև հաղորդումներ էր անում «Սկայորդի» ծածկանունով: Այստեղ նա խոսում է նաև «Հյուսիսսփայլի» մասին, որախացած հայտնում, որ նախանդյանն ու նազարյանը զժտվել են, որ «Հյուսիսսփայլը» շուտով փակվելու է և այլն: «Հյուսիսսփայլը» անպատասխան չի թողնում Սկայորդուն: Նույն տարվա 6-ում տպագրված «Հիշատակարանի» մեջ, նախանդյանը մերկացնում է Սկայորդու զառանցանքները, դրանք համարելով «թշնամություն, կատաղի նախանձ իր և նազարյանի հանդեպ»: «Շատ անգամ,—գրում է նա,—սաստիկ ցանկությունք ձգում են մարդս մի ջլալին թուլության մեջ, շատ անգամ, զառանցանքը, մանավանդ մի այդպիսի խեղճ վիճակում, պատկերացնում է մի վայրկյան հիվանդի աչքին այն ամենայն բանո կատարված, որոնց փափագով ցանկանում էր նա»³:

Վարչամյանին չի բավարարում «Հյուսիսսփայլի» էջերում տպագրված քննադատությունը: Իր նամակում նա գրում է, թե եթե իրոք «Ճոռաքաղը» անարժան է «կրիտիկայի» նյութ լինելու, ապա անարժան է նաև մարդկանց ուշադրությանն առհասարակ: Վարչամյանի այս խոսքերի առթիվ, «Հյուսիսսփայլում» տպագրած նրա նամակի տակ կոմս էմանուելի ստորագրությամբ տրված է հետևյալ ծանոթությունը. «Ամենինն այդպես, որովհետև «Հյուսիսսփայլը» հրատարակողը ավելի մեծակշիռ գործեր ունի լցուցանելու, քան մի աղճատախոս անհյույժ և անծուծ օրագրի վերա խոսք ու դրույց բանալու»⁴: Բայց նամակագիրը հետուն է գնում իր դատողությունների մեջ: Նա գրում է, թե «Ճոռաքաղի» լեզվի քննադատությունը անհրաժեշտ է նաև այն պատճառով, որ Մ. Մսերյանը իրենց կողմերում «դասված է այժմյան երևելիների շարքում»⁵:

² «Հյուսիսսփայլ», 1860, 10, էջ 365:

³ Մ. Նախանդյան, Ներկրի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 186:

⁴ Նույն տեղում, էջ 365:

նրա կարծիքով «պարզամիտ մարդիկ» հաշվի առնելով այդ հանգամանքը կհամարեն նրան «Հոռմի պապի պես անսխալական և անմեղանշական» և նմանվելով նրա ոճին կխանդավարեն նոր լեզվի մշակմանը: Կոմս Էմանուելի ստորագրությամբ նամակի տակ տրված երկրորդ ծանոթության մեջ ասված է. «Եթե հայոց ազգը, ունելով յուր առաջև այնքան ընտիր օրինակներ մաքուր հայկաբանության աշխարհաբար ոճով, այնքան հոգելից և խորհրդավոր գրվածք նոր հայախոսությամբ, այնուամենայնիվ կարող է կարդալ աղճատախոս և անհյուսիք գրվածքը պ. Մսերյանցի և պատվել նորան անմեղանշական, հոռմեական պապի պես, դա ցուցանում է, միայն, որ հայոց ազգը կույր է, չունի դատողություն, կամ կամակոր է: աչքի առաջև դրած պատվականը և ընտիրը չկամի տեսանել կամի հարգել, չկամի ընդունել, բայց ձեռքը պարզում է մի շոր ու ցամաք, անպտուղ ծառի, որովհետև նորան այս ևս հարկավոր էր: Այդպիսի անընտրող ազգի վերա «Հյուսիսափայլի» հրատարակողը կարող է միայն ցավել, բայց օգնել ոչ»:

Նամակում կա պատշաճ հարգանքի տոն Մսերյանի անձի և նրա վաստակների նկատմամբ: Վարչամյանը գտնում է, որ եթե Մսերյանը հանդես գա մեծ ուսումնական հանդեսներում և հրապարակի իր խոր հայագիտությունը, ինքը երբեք չի ուրանա նրանց նշանակությունը ազգի համար: Բայց նա մտահոգված է գրական նոր լեզվի հարցով և իր քննադատությունը վերաբերում է դրան: «Վերջապես թող գերապասիվ մագիստրոսը (իմա՝ Մ. Մսերյանը—Ռ. Ն.) ներե մեզ վեհանձնաբար,—գրում է նա իր նամակի վերջում,—մեր կարծիքը հրապարակելու համար նոր աշխարհաբար լեզվի վերա: Մենք ոչ միայն ոչինչ թշնամություն, ոչինչ ատելություն և սախանձ շունինք զեպի նա, այլ դուրս հակառակ և սիրող ենք նորա գրաբար աշխատություններին: Միայն խնդրում ենք նորան մեր սիրելի ազգի օգտի համար հրաժարվիլ ամենևին այն նոր մշակյալ աշխարհիկ լեզվից, որ ինքը անվանում է ազագուր, տգեղ, թույլ, անհեթեթ և զուրկ ի կարի կարևորացն կանոնաց ուղղախոսության: Աշխարհիկ լեզվով գրելու շնորհը չէ տված նորան: Թող հին բարբառով օգուտ բերե սուրբ եկեղեցվու Հայաստանեաց և լուսածնունդ զավակաց նորին»:

Այս նամակից պարզվում է, որ Սարգիս Տեր-Միքայելյան Վարչամյանց ստորագրությունը կրող նամակի հեղինակը նպատակ է ունեցել հասկացնել «Հյուսիսափայլի» խմբագրին և նրա աշխատակցին, որ փոխանակ Զ. Մսերյանի «տղայական» նամակներով զբաղվելու, անհրաժեշտ է քննադատել «ճոռաբաղի» լեզուն. նրա վնասաբեր հետևանքներից զգուշանալու համար: Ահա ինչու հարց է առաջանում, թե նման բովանդակությամբ և նման միտումով նախադասյան կարող էր իրեն հասցեագրել նման մի նամակ, բնդ որում, հակադրվելով իր կարծիքներին: Ըստ էության նա կարող էր գլուխ խոնարհել և գովասանքի խոսքեր շոռայել այնպիսի հակառակորդի հասցեին, որի գործունեության նկատմամբ նա ուներ իր որոշակի բացասական կարծիքը: Մ. Նալբանդյանի երկերի II հատորի ծանոթագրողը հայտարարում է, թե նազարյանը, բնավ չբաժանելով նամակագրի տեսակետները աշխարհաբարի և գրաբարի տարբերությունների շուրջը, այդ առթիվ իր տված ընդարձակ ծանոթությունների մեջ քննադատում է Նալբանդյանին: «Պարզ է միանգամայն,—գրում է նա,—որ նազարյանը այդպես չէր վարվի պատահական մի թղթակցի հետ:

5 Նույն տեղում:

6 «Հյուսիսափայլ», 1860, II, էջ 396:

ընդհակառակը, այդպիսի լուրջ բանավեճի մեջ կմտնեն միայն նախնադանի հետ»⁷։

Բայց ի՞նչ բանավեճի մասին էր խոսքը։ Մտերյանը, ինչպես նշվեց վերևում, սրբազործում էր գրաբարը, իսկ աշխարհաբարը համարում «աղխագուր» լեզու, «Զի որչափ համեղական և ազգո և զեղեցիկ առաջինն է, այնչափ անհամ է վերջինն, իսկ Վարչամյանը, անգամ ոչ թե մշակված աշխարհաբարը, այլ անմշակը, ինչպես նա կար ժողովրդի բերանում, համարում է ոչ միայն բարձր մշակված գրաբարից, այլև այնքան բարձր, որ կարող էր «փոխ տալ մեռած գրաբարին և համ և ազգություն և զեղեցկություն և ուղղախոսության կարի կարևոր կանոններ»⁸։

Նամակի տակ տրված ծանոթության մեջ նաղարյանը երկու կարծիքներն էլ համարում է ծայրահեղ և միանգամայն անիմաստ խոսք ու զրույց, որոնք արժեք չունեն գիտության դատաստանի առջև։ «Թե հայոց աշխարհաբարը,— գրում է նա,— խելացի բազմազգույն մշակության տակ ընկած և ձևերի և բովանդակության մասին, արժանավորություն ունի այժմուս, Երզնկե համեմատելով հինի հետ, բավական էր այսքան միայն ասել, որ նա ձևերի մասին, ոչ մի բանով պակաս չէր հինից, բայց բովանդակության մասին, անհամեմատ զերազանց. որովհետև բոլոր հին մատենագրությունը, եթե զուրս հանենք նորանից մի քանի ընտիր ծաղիկներ, որ այժմ ևս բուրում են յուրյանց անուշահոտությունը, ոչինչ կերպով կարող չէ համեմատվի այն ականավոր եվրոպական մտածությունը և հայացքով գրած ճառի հետ, որ ստացել է աշխարհաբար լեզուն»⁹։

Զմերժելով Արուսյանի «ոսակախոսության մեծ և խորհրդավոր բովանդակությունը», այն է՝ արաբատյան բարբառի հիմքի վրա աշխարհաբարը գրական լեզու դարձնելու միտումը, նաղարյանը քննադատում է Վարչամյանի սխալ տեսակետը բոլորովին անմշակ բարբառները գրական լեզու ներկայացնելու և նրանց «ուղղախոսությունը» գովաբանելու համար։ Այդ տեսակետը միայն Վարչամյանին չէր։ Նաղարյանը ակնարկում է նաև այն թերթերը, որոնք իր կարծիքով «կարող չեն գրավել յուրյանց համար հայկական աշխարհաբար բանախոսության պարծանք»։ Նաղարյանի արխիվային նյութերից ցանկում նշված է «Հայաստանի դավառական կյանքից առած խոսակցության ձևով» վերնագիրը կրող մի ձեռագիրը, որը հավանաբար ուղարկված է եղել «Հյուսիսսփային» Վարչամյանի կողմից, իբրև նմուշ ժողովրդական լեզվի գերազանցության։ Նման հատվածների մենք հանդիպում ենք և «Կոռնկում» և «Մեղու Հայաստանի» էջերում։ Այդպիսի հետաքրքիր նմուշներից է «Մեղու Հայաստանի» 1860 թ. 12-ում տպագրված «Վաղու Իզահատցի» Լուսնա կյանքից վերցրած պատմվածքը «Իբրև օրինակ բարբառով ստեղծագործության»։ Ի՞նչ մտքեր ու գատողություններ են պարունակել Վարչամյանի գրի առած գյուղական պատկերներն ու խոսակցությունները, մեզ հայտնի չեն։ Բայց հայտնի է, որ նաղարյանը, հավատարիմ մնալով իր սկզբունքին, «Հյուսիսսփային» 1860 թ. № 1-ի «Պանուցման» մեջ հանդիսավոր կերպով հայտարարել էր, թե «տեղական բարբառներով գրած շարագրությունը կարող չենք ընդունել, որովհետև մեր նպատակն է մի փոքր ընդհանրություն տալ լեզվին և քաղաքացրել

7 Մ. Ն ա լ ը ա ն դ յ ա ն, Երկեր, հատ. 2, էջ 434։

8 «Հյուսիսսփային», 1860, 11, էջ 383—389։

9 Նույն տեղում, էջ 390։

այն ձևն ու ոճը խոսելու, որ սեփական էն փոքր ի շատե կրթյալ մարդերի զանազան տեղերում Ռուսաստանի հայերի մեջ: Նրա կարծիքով լեզվի մշակման այդ շրջանում, անհնար էր բարբառներով լուսավորության և դիտության նվաճումները հասցնել ժողովրդին: «Ընտիր և նուրբ գաղափարները կարոտ են և մի ընտիր և նուրբ ամանի», — ասում է Նաղարյանը նույն ծանուցման մեջ: Այդ հարցի շուրջը սկսված բանավեճերի ժամանակ, ոմանք առաջարկում էին աշխարհաբար բառաֆոնդից իսպառ հանել զբարար հնչող բոլոր բառերը: Այդ միտումներով են գրված Վարդան Հովսեփյանի «Զորս անցք և երազն էլ հինգ» վերնագրով հոգվածը, տպագրված «Մեղու Հայաստանի» թերթի 1860 թ. 14-ում և Մ. Տեր-Աղարյանի «Նաղարյանի աշխարհաբարի վերա» և «Աշխարհաբարի վերա» հոգվածները, որոնք տպագրված են նույն թերթի 1860 թ. 56-րդ և հաջորդ տարվա 34-րդ համարներում: Նաղարյանը գատապարտում է Մսերյանին, որը «հոգով ու մտքով պատկանելով անցած օրերին, կարողացել չէ մտքով գուշակել, որ կարելի է մի միջակ ճանապարհ գտնել, մի կամուրջ քանալ անցած օրերի և ներկայիս մեջ. այդ է ահա նորա և մյուս հնազետ մարդերի հանցանքը, մեծ հանցանք դեպի պատմությունը, դեպի գիտությունը, դեպի մեր ներկա ժամանակը, դեպի ազգի պիտույքը ներկայումս»¹⁰: Բայց նրա կարծիքով հաղիվ թե այդ հնազետները, նրանց հետ և Մսերյանը, կարողանային վերափոխել իրենց հայացքները, քանի որ նրանց անհասկանալի էր այն հոր, որը հազեցված է եվրոպական լուսավորականությամբ, մի բան, որից նրանք շատ հեռու էին կանգնած:

Այդ հարցին անդրադարձել է և Մ. Նալբանդյանը իր «Երկու խոսք, թե ինչպես է մեր հայացքը մի օրագրի պաշտոնականատարության մասին...» հոգվածում, որտեղ նա բացատրել է լեզվի բնագավառում «Հյուսիսսփայլի» վարած քաղաքականության ճշմարիտն ու թերին, նկատելով այն իբրև մեծ սկիզբ սկսված մեծ գործի: Լայն քննության ենթարկելով «Հյուսիսսփայլի» լեզվի արժանիքներն ու թերությունները, Նալբանդյանը սխալ է համարում ժամանակակից մամուլում արտահայտված այն միտքը, թե «առանց բնավ հայ լեզուն ուսած լինելու, անկարգ, անկանոն, ինչ որ մեր բերնին գալիս է գրենք թղթի վրա, ինչպես մեր սքանչելի ընդդիմախոսների գրությունքը են, որոնք, համարձակվում ենք կարծել, հաղիվ թե իրենց բոլոր կյանքի մեջ մեկ վայրկյան մտածել էին նոր լեզվի օրենքների և պայմանների վերա»¹¹:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Վարչամյանի նամակում արծարծված այդ խնդիրը ոչ մի կապ չունի աշխարհաբարի մասին Նալբանդյանի ունեցած պատկերացումների և մշակած սկզբունքների հետ:

Այժմ նորից դառնանք Վարչամյանի նամակին: Միքայել Նալբանդյանի երկերի 2-րդ հատորի ծանոթագրություններից երևում է, որ ծանոթագրողին հայտնի է եղել, որ «Ծոռաբաղի» 1861 թ. ԺԳ տետրակում Մսերյան-որդին հոգված է տպագրել այդ նամակի դեմ «Դարձված բանից առ Սարգիս Տեր-Միքայելյան Վարչամյանց» վերնագրով: Ծանոթագրողը հայտարարում է, որ լայն րստ էության ուղղված էր Նալբանդյանի դեմ: Չբավականանալով դրանով, — գրում է նա, — «Ծոռաբաղի» խմբագիրը իր ամսագրում զետեղում է նաև հետևյալ բացակր:

¹⁰ Նույն տեղում, էջ 381:

¹¹ Նույն տեղում, էջ 400:

Տիրացուի շիկավալ
Վարդապետի քյալլա-փաշե...
Յայս երկուից սե. ո՞րն է լավ.
Հասկատուն բոռ իմունու¹²:

«Ծոթաքաղի» խմբագիրը, միանգամայն հասկանալի է այս,—շարունակում է երկերի ծանոթագրողը,—իր քառյակը Նալբանդյանի գեմ չէր ուղղի, եթե Վարչամյանն ու Նալբանդյանը նույն անձնավորությունը չլինեին: Բայց նման եզրակացության հիմք չունենք: Քառյակը տպագրվել է հոգվածից առաջ ճ. Բ. սկզբնատառերով: Ոչ արևտեղ և ոչ էլ հոգվածում Նալբանդյանի անձնավորությունը հիշեցնող ոչ մի ակնարկ չկա: Քառյակը շարադրողի և հոգվածագրի մտքով անգամ այդ պահին չի անցել նման ենթադրություն: Ընդհակառակը, հոգվածագրի տոնից և արտահայտած մտքերից երևում է, որ նա իր խոսքը ուղղում է Բաբու քաղաքում ապրող մի որոշակի անձնավորության: Մսերյան-որդին գրում է, որ «Հյուսիսսփայլին» նամակ գրող Վարչամյանը Բաբու քաղաքում արդեն հայտնի է դառել բոլորին «Հյուսիսսփայլի» զաղափարների պաշտպանությամբ: Այդ, իբր, նրան իջեցրել է բազմաթիվ մարդկանց աչքում և հավասարեցրել կոպիտ, լուսավորությունից զուրկ մարդկանց դասին: Մսերյան-որդին առաջին հերթին ընդգծում է նամակագրի այն խոսքերը, որով նա մեծարում է մագիստրոսին և հայտարարում, թե նրա նկատմամբ չունի ատելություն, թշնամություն և նախանձ, և սիրող է նրա զրաբար աշխատություններին: «Բայց այնուամենայնիվ եւ չեմ կարող հավատ ընծայել, այ. Վարչամյանց, քո այդպիսի «անուշ խոսքերի անկեղծությանը»: Վասնզի եթե ստուգիվ ատելություն, թշնամություն և կամ նախանձ չունենայիր դեպ առ իմ հայրն, անշուշտ այսպես կընթանայիր այդ գործումդ. այսինքն՝ նախ և առաջ չէիր գործածեր տգեղ և անվայել բառեր ընդդեմ մեր պատվուն և ապա չէիր ուղղեր քո այդ նամակը դեպի Հյուսիսսփայլը, այլ՝ կուղղեիր դեպի մի այլ ամսագիր (որովհետև Հյուսիսսփայլի հրատարակչի թշնամությունը առ իմ հայրն հայտնապես երևեցավ այս երեք տարվույս միջոցում և այժմ ես երևում է նույնիսկ նորա օրագրի թերթերից)»: Հոգվածում Մսերյան-որդու մաղձս ամբողջապես ուղղված է Նազարյանի դեմ, որն ինչպես ինքն է ասում, աշխատում է ոչնչացնել իր գիտնականությամբ շրջապատի գործիչներին՝ նրանց պիտակներ տալով: Հոգվածի տակ գրված է՝ «շարունակիսցի»: Թերթում ենք «Ծոթաքաղի» համարները: Ժե համարում, էջ 25-ի տողատակին հանդիպում ենք մի հայտարարության: Մսերյան-որդին հայտնում է, որ առայժմ հետաձգել է Վարչամյանի դեմ ուղղված հոգվածի շարունակության տպագրությունը, որովհետև նամակ է գրել Վարչամյանին և սպասում է պատասխանի: Նորից թերթում ենք «Ծոթաքաղի»: № 20-ում հանդիպում ենք հետևյալ նամակին.

12 Մսերյանների արխիվում գտնվել է նաև անստորագիր մի պամֆլետ Նազարյանի դեմ, որի առաջին քառյակում նորից հիշատակվում է Վարչամյանի անունը.

«Չաբին ծնունդ՝ Նազարյանց
Ի շարույսն գերազանց
Եվ բոլրեկեր Վարչամյանց
Լիր է նման հաջող շանց»:

Ոտանավորը հավանաբար պատկանում է նույն գրչին (Մ. Մսերյանին): Ոտանավորը հրատարակողը նույնպես համոզված հայտարարում է, որ Վարչամյանը դա Նալբանդյանն է (Տե՛ս Մ. Մխիթարյան, Հյուսիսսփայլ ամսագիրը, Նրևան, 1956, էջ 53): Ակադ. Ալ. Հովհաննիսյանի կարծիքով երկու քառյակներն էլ պատկանում են Զարմայր Մսերյանի գրչին:

«Արժանապատիվ Տեր

պ. Սարգիս Տեր-Վարշամյանց

Երեկյան օրը մենք ստադանը մեր ազնիվ բարեկամի Դ. Ռոստոմյանի նամակը¹³, որոյ մեջ են իմացաք՝ թե Հյուսիսափայլ N° 11-երորդ տետրակում Ձեր ստորագրությամբ նամակը բնավին Ձերը չէ և թե նրա մեջ չկան «ոչ Չեր Բա-ուերը և ոչ Չեր իմաստը, որոյ վասն և խնդրում եք ներողամտություն: Առանց ժամանակ անցուցանելոյ դրում եմ ահա Ձեզ, Արժանապատիվ Տեր, որ Ձեր ներողամտություն խնդրելը յայս գործում ըստ ամենայնի ավելորդ է և ոտով հետև խոստովանվում եք ես թե այդ տպված նամակը Ձեր գործը չէ, այն պատճառով և նրա միջում պարունակյալ երգիծաբանությանց պատասխանատու լինելու պարտական չեք: Բայց ըստ որում, այդ նամակը ստորագրված է Ձեր անվամբ, անշուշտ հարկ է, որպես և օրենք իսկ պահանջե, որ դուք հայտնեք հրապարակով (տպագրությամբ) Ձեր այդ գործում անխառն լինելը: Ըշմարտությունը պիտի է յերևան ելանե: Ինչու դուք ամոթ ե նախատինք պիտի կրեք, երբ որ այդ գործին մասնակից չեք: Այստեղ պատասխանատու է պ. Նազարյանցը, ու յուր շարադրած երգիծական սուտ ու մուս. հողվածները տպում է այլոց անունով:

Եթե դուք ըշմարտապես խոստովանում եք (հակառակն մտածել չէ կարելի), թե չկան նույն նամակի մեջ «ոչ Չեր Բաուերը և ոչ Չեր իմաստը», խնդրում եմ, որ իհասանելի դրույս առ Ձեզ՝ աշխատիք շուտով պատասխանել ինձ և պարզապես հայտնել՝ թե հիշալի այդ նամակը որ տպված է Հյուսիսափայլ N° 11 տետրակում Ձեր ստորագրությամբ, Ձեր սեփականը չէ և թե՛ դուք պ. Նազարյանցին իրավունք չեք տված այնպիսի նամակ շարադրելու և Ձեր ստորագրությամբ տպելու, որ ես ևս հիմն ղենելով այդ Ձեր նամակի վերա, այսուհետև դարձուցանեմ իմ բանը՝ ոչ առ Ձեռ, այլ առ պ. Նազարյանցը: Իմ առ Ձեռ պատասխանվույն առաջին հողվածը¹⁴ (բոլորը պիտի լինի շորսը) արդեն տպագրված է «Ճոթադիս» 13-րդ տետրակում, որո շարունակության տպագրությունը առ ժամանակ մի թողի, հայելով դրության պ. Ռոստոմյանի և այս իմ կողմանե կարծես թե բավական է:

Ուրեմն դարձյալ կրկնում եմ, դուք ձեր անձը պատասխանատվությունից ազատ կացուցանելու համար, պարտական եք նախ և առաջ պատասխանել ինձ, հայտնելով Ձեր արդարությունը և անմասն լինելը՝ այդ գործի մեջ և երկրորդ Ձեռ այն պատասխանագրության պատճենը հրատարակել մեր այժմյան օրագրաց և լրագրաց մէջ: Իսկ ընդհակառակն, եթե ընդդեմ Ձեր ասացվածոց, թե այդ նամակի մեջ չկան Ձեր և ոչ մի բառը և ոչ մի իմաստը, չկամենայք այս խորհուրդս կատարել, յայնժամ ակամա կամոք ես պիտի պարտավորվիմ բանս ուղղելու դարձյալ առ Ձեզ և ոչ առ բնավ պ. Նազարյանցն (ըստ որում Ձեր ստորագրությամբ է տպված այս անհամեստ նամակն) և երևան հանել նորա միջի անուղիղ և անարդար ասացուածքը, որը ավելի գրողին ամոթ վերաբերի, քան թե մեզ:

Ողջ լերուք՝ ընտրելով օգտավետը և հարգելով ճշմարտությունը:

Նամակի վերջում Ձ. Մսերյանը տալիս է հետևյալ ծանոթությունը. «Մինչև այս տետրակի տպագրության օրը, այսինքն մայիսի 3-ը. դեռ պատասխան չունիմ»:

¹³ 23 դեկտեմբեր (ծան. նամակագրի—Ռ. Ն.):

¹⁴ Առաջարկություն (ծան. նամակագրի—Ռ. Ն.):

Ուրեմն ի՞նչ է պարզվում: «Հյուսիսափայլ» ամսագիրը, ուր տպագրված էր Վարչամյանի նամակը, փոփոխություններով ու ծանոթադրություններով, հասնում է Բաքու: Նամակը կարդալուց հետո Ե. Ռոստոմյանը դեկտեմբերի 23-ին նամակ է գրում «Ճոռաքաղի» խմբագիրներին և շտապում հայտնել, որ նամակի մեջ եղած «բառերը և իմաստը» Վարչամյանին չեն և նամակագիրը Մսերյանի հառցեին ուղղած երգիծաբանության համար պատասխանատու չէ: Ռոստոմյանը Վարչամյանի անունից ներողություն է խնդրում Մսերյաններից: Ռոստոմյանի գրած նամակը մեր ձեռքի տակ չկա. ուստի անհայտ է մեզ, թե ուրիշ ի՞նչ է գրել նա Վարչամյանի նամակի մասին, որը տարակուսանք է առաջացրել Մսերյան-որդու մոտ և ստիպել նրան հաջորդ օրն իսկ նամակ գրել Վարչամյանին: Նախ նա ցանկացել է իմանալ, թե ի՞նչ է նշանակում «բառերը և իմաստը», ցանկացել է, որ Վարչամյանն իր ձեռքով գրի իրողությունը և պատասխանատվությունը զցի Նազարյանի վրա, որը ինչպես գրում է նա «յուր շարադրած երգիծական սուտ ու մուտ հողվածները տպում է այլոց անունով»: Ուրեմն Մսերյանը կասկածում է, որ այդ նամակը գրված, կամ վերագրված պիտի լինի Նազարյանի կողմից: Նա պահանջում է Վարչամյանից գրել այդ մասին հրապարակորեն և բացահայտել Նազարյանի կեղծիքը:

Մսերյանը նամակն ուղարկել է Վարչամյանին հունվարի 18-ին, իսկ հղվածը տպագրել է փետրվարի առաջին կեսին (№ 13-ում): Վարչամյանը ստացել և կարդացել է թե նամակը և թե հողվածը: Կարդացել է և լուր... Անցել են ամիսներ: Հավանաբար նա սպասել է հողվածի շարունակությունը, նորից լուրու համար: Մսերյանի համբերությունը սպառվել է: Մայիսի 3-ին նա հրապարակել է հունվարի 18-ին Վարչամյանին գրած իր նամակը և զղուշացրել, որ պատրաստվում է տպագրել իր հողվածի հաջորդ երեք գլուխները: Մսերյանը հրապարակում է հողվածի միայն երկրորդ մասը՝ «Ճոռաքաղի» հունիսի համարում: Թերթը փակվում է, հողվածը մնում է անավարտ:

Մ. Նալբանդյանի տպագրած Հիշատակարանի հատվածից հետո Մ. Մսերյանի դեմ հանդես է եկել Ստ. Նազարյանը ամսագրի N 8-ում, Կիրակոս Մարգարյան ծածկանունով: Այստեղ նա Սկայորդու նամակները համարում է «տղայական խենդ ու խելառ գրվածներ» րնդղեմ լազապարծանք «Հյուսիսափայլի» և նորա ճշմարտաքարոզ Հրատարակչիդ...», Սկայորդուն անվանում է «մոլորաշավիղ» և այլն: Ստանալով Վարչամյանի բավական համեստ ոճով գրված նամակն իր որոշ քննադատությամբ, Նազարյանը, ինչպես պարզ երևում է նամակից, տալիս է նրան իր «ընդհանուր շունչը և պրիմիտիվական ինքնատիպ ոճը»:

Վարչամյանը կարդացել է «Հյուսիսափայլի» մեջ տպագրված իր նամակը և անհանգստացել տեղի ունեցած փոփոխությունների և ծանոթությունների համար: Նրա բարակամր՝ Գ. Ռոստոմյանը, Վարչամյանին այդ ծանր վիճակից մասամբ դուրս բերելու նպատակով շտապել է բարեխոսել Մսերյանների առջև, Վարչամյանին նրանց հարձակումներից զերծ պահելու համար: Բայց երբ Մսերյանը տպագրել է իր հողվածը, Վարչամյանը հավանաբար որոշել է այլևս ընթացք չտալ գործին, իր վրա կրելով գործած «հանցանքի» պատիժը:

Իսկ ինչ վերաբերում է Նալբանդյանի անունից տրված ծանոթություններին, ապա պետք է ասել հետևյալը: 1860 թ. հունիսի 16-ին Նալբանդյանը Պետերբուրգից գալիս է Մոսկվա, ուր մնում է մինչև հուլիսի 6-ը: Օգոստոսի 17-ին մեկնում է Նախիջևանից, 24-ին՝ հասնում Թիֆլիս: Մինչև սեպտեմբերի

3-ր անց է կացնում խաոր և տաղնապալի օրերը Քշնամական բանակը ղուի է բարձրացնում չրա դեմ՝ խափանելու արտասահման զնալու զործը։ Նրա և Նազարյանի անունից նամակներ են հորինվում Նալբանդյանի «Հիշատակարանի» տպագրությունից հետո «Մեղու Հայաստանի» էջերում Սկայորդին հանդես է դալիս Նալբանդյանի և Նազարյանի դեմ, ծաղրում նրանց բարեկամությունը։ Դեպքերի այս ընթացքից երևում է, որ Վարչամյանի նամակը չէր կարող Նալբանդյանի ձեռքը ընկած լինել։ Ուրեմն պետք է ենթադրել, որ Նազարյանը հանդես է եկել նաև կոմս էմանուելի անունից, քանի որ նամակը ուղղված է եղել նրան։ Ծանոթությունների բովանդակությունն էլ ինքնին թելադրում է այդ միտքը։

Այսպիսով, անդրադառնալով կոնկրետ մեզ հետաքրքրող հարցին՝ Վարչամյանի ստորագրությամբ «Հյուսիսափայլում» տպագրած նամակին, գտնում ենք, որ այդ նամակը կապ չունի Նալբանդյանի անվան հետ։ Նա պատկանում է Վարչամյանին և հարկ է ուղղել սխալը, հանելով այն Նալբանդյանի երկերի ժողովածուի երկրորդ հատորից։

Ի. ՆԱՆՈՒՄՅԱՆ

ՄԻ ՀԱՂՎԱԿՅՈՒՏ ՀԻՆ ԵՐԳԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Մեր հին գրականության հարուստ ժառանգության մեջ ուրույն տեղ է զբաղում V—IX դարերի քնարերգությունը, որն անհամեմատ ավելի քիչ է հետազոտված։ Ընդհանուր է, այն հիմնականում բաղկացած է հոգևոր երգերից, սակայն նրա լիարժեք գնահատությունը հայագիտության համար էական նշանակություն ունի։ Առանձնապես անմխիթար է Շարակնոց կոչված ժողովածուի գիտական հրատարակության և հանգամանալից ուսումնասիրության զործը։

Այս առումով վերին աստիճանի ուշադրով են Մաշտոցի անվան Մատենադարանի № № 9838 և 6885 ձեռագրերը, որոնցից այստեղ կփորձենք ամփոփ դժերով ներկայացնել միայն վերջինի (№ 6885) մոտավոր պատկերը։ Գա իրոք երգերի մի հազվագյուտ ժողովածու է՝ արմանի հատուկ ուշադրության։ Այն Մատենադարան է բերվել 1914 թ. իմ անապատից, ուր երել է 179-րդ համարը։ Նրա մասին տպագիր գրականության մեջ, որքան հայտնի է մեզ, ոչ մի խոսք չենք չի եղել։ Վերջերս Մատենադարանի վաղամեծիկ գիտ. աշխատող Վ. Դեդրյանը՝ իրեն հանձնարարված շարակնոցների մատյան-տախտակները կազմելիս, այդ ձեռագրի դիմաց կատարել է հետևյալ արժեքավոր նշումը. «Ոչ սովորական և ո՛չ էլ անսովոր տիպերին նման չէ»², նկատել տալով նրա խկապես ոչ սովորական լինելը։

№ 6885 ձեռագիրը գրված է խոշոր բուրգրով, թղթի վրա, XIII դարում. թերթեր ընկած լինելու պատճառով զրկված է խորագրից և հիշատակարանից։ 41ա թերթում առկա փոքրիկ հիշատակագրությունից երևում է, որ գրիչը (գուցե ստացողը) կոչվել է Կարապետ։ Այդ ձեռագիրն այժմ բաղկացած է 155 թերթից և բովանդակում է հետևյալ նյութերը.

¹ Մ. Ա. Բ. և Ղ. ան., Հայոց հին գրականության պատմ., հատ. 1, 1944, էջ 471։

² Մատենադարան, Ձեռագրապահ, մատենագիտական մատյանների ֆոնդ։